ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

GOETHE INSTITUT

Sprache. Kultur. Deutschland.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության մշակութային ինստիտուտը՝ Հայաստանում Գյոթե ինստիտուտը, Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրի համար փնտրում է մոտիվացված ծրագրի համակարգողի: Աշխատանքը նախատեսվում է Գյոթե ինստիտուտում 2026թ. սեպտեմբերից մինչև 2029թ. փետրվար:

ՊԱՇՏՈՆԸ

Երիտասարդական ծրագրի համակագող

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՍՏԻՔԸ
Կես դրույք 25 % (շաբաթական 10 ժամ)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
Երևան, Հայաստան

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ
2026 թ. սեպտեմբեր – 2029 թ. փետրվար

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ
Ծրագիրը նպատակ ունի ամրապնդել ԵՄ-Հայաստան համագործակցությունը մշակույթի, երիտասարդության ներգրավվածության և շարունակական զարգացման նախաձեռնությունների միջոցով՝ միաժամանակ բարձրացնելով Եվրամիության գործունեության տեսանելիությունն ու հանրային ընկալումը Հայաստանում: Այն իրականացվում է ԵՄ պատվիրակության, EUNIC անդամների, ազգային շահառուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սերտ համագործակցությամբ: Ծրագիրը համադրում է մշակութային էկոհամակարգի զարգացումը, երիտասարդության մասնակցությունը և շարունակական զարգացման վրա կենտրոնացած հանրային ներգրավվածությունը:

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Երիտասարդության ծրագրի համակարգողը պատասխանատու է ծրագրի շրջանակներում երիտասարդությանը վերաբերող աշխատանքների օպերատիվ պլանավորման, համակարգման և իրականացման համար:
Պաշտոնը կենտրոնանում է երիտասարդության մասնակցության ամրապնդման, կառուցվածքային երկխոսության և փոխանակման աջակցման, ինչպես նաև Հայաստանի երիտասարդների և եվրոպական ցանցերի ու նախաձեռնությունների միջև կապերի խթանման վրա:
Երիտասարդության ծրագրի ղեկավարը համակարգելու է համագործակցությունը երիտասարդական կազմակերպությունների, պետական հաստատությունների և համապատասխան շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելով լայն հանրային ներգրավվածություն և ծրագրի տեսանելիություն:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի կառավարում և համակարգում

- Ծրագրի պլանավորում, համակարգում և իրականացում
- Ժամանակին արդյունքների և փուլերի ապահովում
- Ծրագրի ժամանակացույցների, գործընկերների ու շահագրգիռ կողմերի համակարգում

Երիտասարդության մասնակցություն և ներգրավվածություն

- Երիտասարդության մասնակցության համակարգում և աշխատանքների իրազեկում
- Երիտասարդների կողմից նախաձեռնված ծրագրերի ու ներգրավվածության ձևաչափերի խթանում
- Երկխոսության, փորձի փոխանակման և ցանցային հնարավորությունների աջակցում

Գործընկերության և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

- Ծրագրի գործընկերների ու արտաքին շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունների պահպանում և զարգացում
- Երիտասարդական կազմակերպությունների, հաստատությունների, ցանցերի միջև համագործակցության խթանում

Միջոցառումների կազմակերպում և իրականացում

- երիտասարդական միջոցառումների, ֆորումների, փոխանակումների և տեսանելիության ապահովման աշխատանքների համակարգում
- ծրագրի աշխատանքի բարձրորակ իրականացման ապահովում

Տեսանելիության և հաշվետվություն

- հաղորդակցման գործընթացների աջակցություն և տեսանելիության խթանում
- ծրագրի արդյունքների հավաքագրում և հաշվետվության պատրաստում
- մոնիթորինգի և գնահատման գործընթացների աջակցություն

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Պարտադիր է

- Բարձրագույն կրթություն՝ երիտասարդական աշխատանքում, կրթության, սոցիալական գիտությունների, հանրային քաղաքականության, միջազգային հարաբերությունների կամ հարակից ոլորտում
- Առնվազն 3 տարվա համապատասխան մասնագիտական փորձ՝ երիտասարդությանը վերաբերող ծրագրում կամ նախագծերում

- Փորձ երիտասարդության մասնակցության և ներգրավվածության աշխատանքների կազմակերպման մեջ
- Փորձ սեմինարների, ֆորումների, փոխանակումների կամ համայնքային նախաձեռնությունների կազմակերպման մեջ
- Արդյունավետ հաղորդակցման և թիմային աշխատանք վարելու հմտություններ
- Գերազանց հայերենի և լավ անգլերենի իմացություն

Ցանկալի է

- Փորձ երիտասարդական ցանցերի, խորհուրդների կամ խորհրդատվական մարմինների հետ
- Ծանոթություն Erasmus+, EU4Youth, Young European Ambassadors (YEA) կամ նմանատիպ նախաձեռնություններին
- Փորձ քաղաքական երկխոսության և երիտասարդության մասնակցության մեխանիզմներում
- Փորձ տարածաշրջանային իրազեկման և համայնքային ներգրավվածության մեջ
- Ռազմավարական հաղորդակցման և գործընկերային համագործակցության ձևաչափերի տիրապետում

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախագծերի պլանավորում և իրականացում
- Գործընկերության զարգացում և մասնակիցների կառավարման փորձ
- Հաղորդակցման և աշխատանքները վարելու հմտություններ
- Կազմակերպչական և համակարգման հմտություններ
- Միաժամանակյա առաջադրանքների կառավարում
- Խնդիրների լուծման և ճկուն պլանավորում
- Բազմամշակութային միջավայրում աշխատելու կարողություն

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- Ինքնակենսագրություն (առավելագույնը 4 էջ)
- Մոտիվացիոն նամակ (առավելագույնը 2 էջ), որտեղ ներկայացվում է թեկնածուի մոտիվացիան տվյալ պաշտոնի համար և ցույց է տրվում, թե ինչպես են նրա որակավորումները և փորձը համապատասխանում պաշտոնի պահանջներին
- Երկու մասնագիտական հղումների (ռեֆերենսների) կոնտակտային տվյալներ

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է 2026թ. օգոստոսի 23-ը: Խնդրում ենք դիմումներն ուղարկել անգլերեն լեզվով միաժամանակ **hasmik.muradyan@goethe.de** և **jan-tage.kuehling@goethe.de** հասցեներին:

Խնդրում ենք որպես նամակի թեմա նշել
Application – Project Manager – Youth

Տեղում անցկացվող հարցազրույցները նախատեսված են օգոստոսի 27-ին և 28-ին:

Խնդրում ենք նկատի ունենալ
Հայտարարված հաստիքը կախված է արտաքին ֆինանսավորման բարեհաջող հաստատումից: Պայմանագիր կնքվելու է միայն հաստատված ֆինանսավորման դեպքում: